

ՍԵՂԱ. ԷԼՈՅԱՆ. Արդի հայերենի նորաբանությունների բառարան. Երևան, «Նաիրի» հրատ., 2002, 492 էջ:

Ամեն մի ժողովրդի հասարակական, քաղաքական, գիտական և մշակութային կյանքում տեղի ունեցող գրեթե յուրաքանչյուր փոփոխություն իր որոշակի արտացոլումն է գտնում նրա լեզվի բառապաշարի մեջ, որովհետև վերջինս խիստ զգայուն է հիշյալ կարգի փոփոխությունների նկատմամբ: Վերջին տասնամյակներին հայ իրականության մեջ ևս տեղի ունեցան զգալի փոփոխություններ, որոնց հետևանքով ժամանակակից հայերենի բառապաշարը, ինչպես նաև տերմինաբանությունը հարստացան բոլորովին նոր բառերով, տերմիններով ու տերմինային անվանումներով: Ավելին, նախկինում լայն գործածություն ունեցած մի շարք բառեր ու տերմիններ սկսեցին գործածվել նաև իմաստային նոր երանգներով, ձևաբանությամբ ավելի լայն կիրառություն:

Հայոց լեզվի բառապաշարի և տերմինաբանության նման հարստացումն ու կատարելագործումը նոր խնդիր են դնում հայ լեզվաբանության, մասնավորապես հայոց լեզվի բառային կազմի ուսումնասիրության բնագավառի առաջ: Ուստի պատահական չէ, որ հատկապես վերջին տարիներին հայոց լեզվի մասնագետների շարունակական ջանքերի շնորհիվ հրատարակ են հանվում տարբեր ծավալի և ուղղվածության բառարաններ, տերմինաբաններ և այլն:

Նման աշխատանքների մեջ բավականին նկատելի երևույթ է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի առաջատար գիտաշխատակից, բանասիրական գիտությունների դոկտոր Սեդա Էլոյանի «Արգի հայերենի նորաբանությունների բառարանը», որը լույս է տեսել նույն ինստիտուտի գիտական խորհրդի երաշխավորությամբ, պրոֆեսոր Լ. Հովսեփյանի լավագույն խմբագրությամբ: Բառարանը պարունակում է 7715 բառ, բառակապակցություն և դարձվածային միավոր: Ինչպես հե-

ղինակն է նշում բառարանի բուն վերնագրին հարող մասում, դրանում ընդգրկված են նոր բառեր և իմաստային նոր կիրառություններ, դարձվածքներ և բառակապակցություններ, արտահայտություններ և հապավումներ, որոնք ունեն բառային մեկ, ինքնուրույն միավորի արժեք:

Ս. Էլոյանը հեղինակ է «Ածանցները ժամանակակից հայերենում» (Երևան, 1963), «Ժամանակակից հայերենի բառային ոճարանություն» (Երևան, 1989), ինչպես նաև «Բառագիտություն» (տե՛ս «Ժամանակակից հայոց լեզու»): Հ. 1, Երևան, 1979, էջ 161–486) աշխատությունների, գիտական մի շարք հոդվածների, որոնք նվիրված են արդի հայերենի բառապաշարի համակողմանի ուսումնասիրությանը: Եվ միանգամայն բնական է, որ նա պիտի ձեռնամուխ լիներ նման ծավալի և լայն գործածության տեսակետից խիստ անհրաժեշտ բառարանի ստեղծման գործին:

1960-ական թվականներից հետո արդի հայերենի բառապաշարը բառարանագիտական առումով դարձավ լայն ուսումնասիրության առարկա: Ստ.Մալխասյանի քառահատոր բառարանից հետո, թվում էր, հայ բառարանագրությունը երկար ժամանակ պիտի անելիք չունենար: Սակայն հայերենի զարգացումն ու կատարելագործումը հասան աշխարհի չափերի, որ անհրաժեշտաբար կազմվեցին նոր ծավալի բացատրական բառարաններ: ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատակիցների ջանքերով կազմվեց «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (ՀՀ. 1–4, Երևան, 1969–1980), էդ. Աղայանը հրատարակեց իր «Արդի հայերենի բացատրական բառարանը» (Երևան, 1976): Վերջինս մեզանում եղավ գրեթե չգերադանցված մի աշխատություն, որովհետև աչքի էր ընկնում կարևորագույն երկու հատկանիշով ընդգրկված նյութի, այսինքն՝ բառահոգվածների ար-

դիականությունը մի փոքրիկ իմաստարանական ճշգրիտ մշակմամբ, ինչպես նաև արդի Հայերենի գրական երկու տարբերակների բառամթերքի լայն ընդգրկմամբ (այս փոքրիկ հատկանիշը նկատի ունի նաև Հեղինակը, որ բառարանը կոչել է արդի Հայերենի բառարան): Երրորդ խոշոր ձեռքբերումը՝ Լ. Բարսեղյանի «Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարանը» (Երևան, 1976), բառամթերքի ծավալի տեսակետից դարձավ գրեթե աննախակիս մի աշխատություն: Այնուհետև, 1980-ական թվականներին Հրապարակ նկատի Հայերենի բառապաշարի իմաստարանական Հավաքագրման ու վերլուծությունը նվիրված զգալի թվով նոր, ուշագրավ բառարաններ: Սրանցում շեշտը դրվում էր նորարարական և տերմինների ոչ միայն սովորական, այլև նոր իմաստային զործածությունները: Մյուս կողմից՝ ի մի էր բերվում Համեմատաբար նոր ժամանակի դեղարվեստական, գիտական և հոգևոր գրականություն, ինչպես նաև մամուլի և լրատվության միջոցների, ճյուղային տերմինաբանությունների մեջ, առանձին Հեղինակների և գործիչների լեզվի բառապաշարի նորարանությունների որոշակի մասը: Այսպես, նկատելի ձեռքբերում ենք Համարում Ա. Պապոյանի երկհատոր բառարանը՝ նվիրված Պարույր Սևակի լեզվի բառապաշարին (Երևան, 1981–1982), Ֆ. Սյրիսյանի «Բառարան-տեղեկատու» (Երևան, 1982), Փ. Մեյթիսյանի «Նոր բառերի բացատրական բառարանը» (Երևան, 1996), Լ. Մեարսյանի «Գարեպին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի երկերի բառարանը» (Մոսկովա, 2000) և այլն:

Հայ բառարանագրական նման ձեռքբերումն, ահա, համարվում է Ս. Էլոյանի սույն բառարանով: Բառարան կազմելը, սովորական հայացքով նայելիս, թվում է բավականին հեշտ մի աշխատանք: Այնինչ փոքրիկ, ըստ էության, սլաշանջում է հետևողական մոտեցում, անհատնում նվիրում, անխորտակ եռանդի ցուցադրում: Իսկ նորարանությունների՝ նոր բառերի, տերմինների, առավել ևս եղած բառային միավորների նոր իմաստային կիրառությունների հավաքումն ու մշտումը, բառարանագրական

գիտական վերլուծությունը ստիպում են ավելի մեծ ջանքերի գործադրում՝ հիշյալ հատկանիշների առումով: Ուստի կարծում ենք, որ սույն բառարանը դնահատելի է ամենից առաջ նման եռանդի, ջանքերի դրսևորման տեսակետից, որովհետև լայն ընթացողի սեղանին է դրված բավականին ուշագրավ և արժեքավոր գիտական մի աշխատանք, որն ի թիվս այլ Հանգամանքների ունի նաև գործնական նշանակություն:

Սույն բառարանն աչքի է ընկնում մի շարք արժեքավոր, դնահատելի կողմերով: Ստորև հարկ ենք համարում անդրադառնալ դրանցից մի քանիսին՝ կապված նաև Հայ բառարանագրության ընդհանուր ձեռքբերումների հետ:

ա) Հայ բառարանագրության մեջ, սկսած Մխիթար Սեբաստացու և նրա աշակերտների «Բառգիրք Հայկազյան լեզվի» (ՀՀ. 1–2, Վենետիկ, 1749–1769) կոթողային աշխատությունից, ստեղծվել է բացատրական բառարանի կազմության մի սքանչելի ավանդույթ: Եվ քանի որ Սեբաստացին իր բառարանը կազմում էր ժամանակի եվրոպական բառարանագրության չափանիշով, որը բնականաբար կատարելագործվում էր նաև հետագայում, այնուհետև հետագա բառարանագիրները հաշվի էին առնում ոչ միայն եվրոպական, այլև ռուս բառարանագրության նվաճումները, ուստի մեզանում բացատրական բառարանը դառնում է անհամեմատ արժեքավոր մի երևույթ: Այս դեպքում նկատի ունենք բառարանային միավորների մշակման տեխնիկան, այլ լեզուների տվյալների հետ առնչակցելու հանգամանքը, դրական հուշարձանների ընձեռած հնարավորության օգտագործման սխեմատիկան և այլն, որոնք այսօր կարող են նույնիսկ սովորական թվալ, սակայն այդ հատկանիշները խիստ կարևոր են ավանդույթի տեսակետից: Այդ ավանդույթին է հետևել նաև Ս. Էլոյանը «Արդի Հայերենի նորարանությունների բառարանը» ստեղծելիս:

բ) Բառարանի առաջաբանում Հեղինակը խոսում է նոր ժամանակներում երևան եկած նման բառարանների մասին, հիմնավորում իր բառարանի ստեղծման անհրաժեշտությունը, այնուհետև՝ բառարանի կա-

ուղեցվածքը, որում քննարկվում է երեք Հարց՝ բառացանկի ընտրությունը, բառապաշարի բառադիտական և քերականական մշակումը, օրինակները, այսինքն՝ բնագրային վկայակոչումները: Այդ հանգամանքների մատնանշումը խիստ անհրաժեշտ է ոչ միայն առհասարակ, այլև հատկապես նորարանությունների բառարան կազմելու տեղեկատվությամբ: Ներկայացվում է նաև Համառոտագրությունների ցանկ (մանավանդ վերջին 2-3 տասնամյակում երևան եկած և բառարանում օգտագործված գրականություն), նշվում են նախկինում լույս տեսած այն կարևորագույն բառարանները, որոնց տվյալների Համեմատությունը է, որ Հեղինակն առանձնացնում է այս կամ այն բառը, բառի նոր իմաստային գործածությունը իրրև նորարանություն: Երբ մանրամասն ծանոթանում ենք այդ ցանկերին, չենք կարող չհնկատել, թե բառարանի Հեղինակը ինչպիսի մանրամասնությամբ և անգույն խնայատանքով է հավաքել վերջին տասնամյակներին մեր լեզվում գործածված բառային նորարանությունները:

գ) Մենք բարձր ենք գնահատում սույն բառարանի բառաչոգվածների մշակումը, որը գրեթե անթերի և սպառիչ ձևով ներկայացնում է այս կամ այն նորարանության լեզվական, այսինքն՝ բառարանագիտական քննարկման սլահանջները: Չենք կարծում, թե հարկ կա այս կամ այն բառաչոգվածը, իրրև օրինակ, մեջբերելու, որպեսզի Համոզիչ լինի այս կետում ասվածը: Նման օրինակները կազմում են սույն բառարանի բուն էությունը:

դ) Նորարանությունների առանձնաբան ման մեջ կարևոր ուշադրություն է դարձվել ոչ միայն արդի գրական Հայերենին բնորոշ ձևերին, այլև խոսակցական տարբերակի մեջ մտնող բառերին ու արտահայտություններին: Նկատենք նաև, որ բառարանային արժեք են ձևք բերել նաև տարբեր կարգի հասկանումները (բացի դուտ

տառային հասկանումներից), մի բան, որին մեծ տեղ չէր հատկացվում նախորդ բառարաններում: Վերջինս սլահանագրված է ոչ միայն Հեղինակի բառադիտական հասկանումով, այլև մեր օրերի գրավոր խոսքում նման ձևերի լայն գործածությամբ: Եվ քանի որ նման ձևերը (հասկանումները, նաև բառակապակցության, առանձին արտահայտության արժեք ստացած մյուս միավորները) բավականին նկատելի են իրրև նորարանություն, ուստի բնական է, որ Հեղինակն իր բառարանում սլահանագրված հատկացներ նաև նման միավորներին:

ե) Մենք ավանդույթին Հետևելու Հանգամանքի Հետ ենք կապում այն, որ սույն բառարանում այս կամ այն նորարանությունը բառարանագիտական վերլուծություն, սլահանագրված բացատրության է արժանանում սլահանագրված և ճիշտ ու սլահանագրված ձևակերպումով: Նկատենք, որ սլահանագրված շատ կարևոր է ուշադրություն առարկա բանի կամ տերմինի բնագրային գործածություն ճիշտ վերհանումը: Հակասակ դեպքում կարող է այնպես ստացվել, որ այս կամ այն միավորը բացատրվում է ոչ այն բովանդակության նկատմամբով, որը գրված է եղել սլահանագրված բնագրային գործածության մեջ: Այս հանգամանքին մեծ ուշադրություն է դարձված, ուստի կարելի է արժանին մատուցել բառարանի Հեղինակին իրրև արդի Հայերենի բառապաշարի Հմուտ մասնագետի, մեր լեզվի իմաստային-իմաստաբանական դարգացմանը Հետևողի և ուսումնասիրողի:

Թերևս կարելի էր մատնանշել ինչ-ինչ թերացումներ կամ բացթողումներ, քանի որ անհնարին է, որ նման աշխատանքում դրանք չլինեն: Սակայն մենք ամենևին հակված չենք այս արժեքավոր գործում նման օրինակներ փնտրել, մանավանդ որ դրանք կլինեն շատ աննշան ու չնչին:

Սույն բառարանը մի առանձին լուծա է Հայ բառարանագրության գանձարանում:

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ